

Այս կը պահանջեն երանանքը հանգուցեալին յիշատակին յարգանքը և Ազգին ու Եկեղեցիին օգուտն և պատիւը:

«Էջմիածնի ոսկի սիւնը...»

Միտքս ընազդօրէն կ'երթայ դարձեալ աշուղական տաղին, զոր չեմ գիտեր թէ սիրտ ունի՞ն հիմակ հոն մարդիկ երգելու, լալու համար Ազգին հոգևոր Տէրն ու սիրելի Հայրը. չենք գիտեր նոյն իսկ թէ ե՞րբ կատարուեցաւ իր յուզարկաւորութիւնը, որուն մասին՝ հակառակ սովորութեան՝ լռած էր զուժկան հեռագիրը. այդ զանցառութիւնը հետեանք էր արդեօք իր սուգին հոն յառաջ բերած ցնցումին. ա՞յդ պատճառով էր արդեօք դարձեալ որ, ատեն կամ միշտ չունենալով, Գեր. Խորհուրդը մեզի էր թողած զոյժը ընդ ամենայն կողմանս հաղորդելու պարտականութիւնը:

... Գրելը կը դողդոջէ մատներուս մէջ, մինչ սիրտս կը լեցնէ տրտմութեան մովքը. ու մշուշի մը մէջէն նշուող իր գէմքին առջև, որուն վրայ կը ճանչնամ իր անոյշ բարձրին, մաքուր նկարագրին և ազնուական հոգիին պապկերը, երբեմնի օծակից եղբօր և լծակցի, և յետոյ հոգևոր որդւոյ և աշակցի բայց միշտ հիացողի հոգւոյս խորէն իրեն ուղղուած նուազ ձայնս է որ կը լսեմ իմ մէջս — «Սո՛ւրբ Հայրապետ...»:

★ ★ ★

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Օ Թ Ե Ր

(ԲԱՆՂՈՒԱՅ ՍԻՈՆԻ 1932 ՆՈՅԵՄԲԵՐԻ ԹԻԿԷՆ)

- 1873ին ծնած ի Թիֆլիս.
- Ընթացք աւարտած Ներսէսեան Դպրանոցի.
- Ազատ ուսանող Համալսարանի ի Ժընէվ.
- Ուսուցչական գործունէութիւն ունեցած Թիֆլիսի շրջանակին մէջ.
- 1901ին վարդապետ ձեռնադրուած Սեւանի մէջ, և ընդհուպ առաջն. փոխանորդ Նոր Պայազիտի.
- Աչքառու գործունէութիւն ունեցած կալուածներու գրաւման խնդրոց ատեն, և այս պատճառաւ աքսորուած.
- Վերոնդով Ռաշքովի ատեն կը դառնայ աքսորէ և կը շարունակէ Նոր Պայազիտի պաշտօնը.
- 1910ին Ժողովրդական ընտրութեամբ, փոխ-թեմակալ կ'ընտրուի Երեւանի.
- Նոյն տարւոյ Սեպտ. 19ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Իզմիրեան կաթողիկոսէ.
- 1920ին Հայրապետական նուիրակ կ'երթայ Ամերիկա.
- 1923ին կաթողիկոսական Տեղակալ կը կարգուի, պահելով հանդերձ Երեւանի պաշտօնը.
- Ընդհուպ կը թողու Երեւանի պաշտօնը, և Էջմիածին կը փոխադրուի իբրեւ Տեղակալ և լուսարարապետ.
- Տ. Գեորգ Ե. ի վախճանումէն վերջ, իբրեւ Տեղակալ կը նախագահէ Հոգեւոր Գերագոյն Խորհրդին.
- 1932 Նոյեմ. 10ին, Ազգ. Եկեղեց. Ընդհ. Ժողովէն կ'ընտրուի Կաթողիկոս Ամենայն Հայոց, և յաջորդ օրը կ'ընդունի օծում հայրապետական.
- Իր ձեռնադրած եպիսկոպոսներն են. Թաղէոս եպս. Էջմիածնի վանական, Յովսէփ եպս. Ամերիկայի համար, Մամբրէ եպս. Սիրունեան առաջն. փոխանորդ Եփրատի, Մամբրէ եպս. Գալֆայեան առաջն. Տեղապահ Ամերիկայի.
- 1938 Ապրիլ 10ին կը վախճանի: